Թէեւ քիչ-քիչ եւրոպական ազդեցութեան տակ ճապոնացու բնաւորութիւնն էլ սկսել է արդէն փոփոխութեան ենթարկւել, դժբախտաբար՝ ոչ դէպի լաւը: Դա մանաւանդ նկատելի է նաւահանգիստ քաղաքներում, ինչպէս են Նագասակի, Հօբէ, Իօկօհամա:

Եւրոպացիների հետ մշտական շփումը ճապոնացուն դարձնում է քծնող ու խոնարհամիտ, կամ նա անգլիացուն հետեւելով՝ միանթափանցելիսառնութիւնուանտարբերութիւն է առնում իր վրա: Անտանելի է այդ տեսակներին հանդիպելը: Գործից դուրս դրանցից ոչ մի աւելորդ բառ չես լսիլ եւ ամեն բառ չափած ու ձեւած է. մարդ ուղղակի սառչում, մնում է:

Բայց բոլորովին հակառակն է ներքին նահանգներում, ուր եւրոպացիք քիչ մուտք ունեն. այդտեղ ճապոնացին պահել է անխախտ իր նախկին սիրալիրութիւնը եւ մի տեսակ զուտ մանկական բացսրտութիւն, որ անմիջապէս քաշում է մարդուն:

Նրա հետ խօսելիս պէտք է հետեւես նրա քաղաքավարութեանը եւ չխրտնեցնես նրա զգացումը, ինչ որ եւրոպացիք յաճախ մոռանում են, եւ այն ժամանակ նա շատ պարզ է քեզ հետ ու սիրով խօսակցում:

Նա սիրում է խօսել ամեն բանի մասին, ինչ կատարւում է աշխարհիս երեսին, մանաւանդ քաղաքականութեան, որով նա շատ է հետաքրքրւում:

Ճապոնական քաղաքավարութիւնը այն աստիճանի է հասնում, որ մինչդեռ մեզանում վիրաւորանքը սրբելու համար թափում են հակառակորդի արիւնը կամ գոնէ մի ապտակ են տալիս,— ճապոնացին իրան է սպանում: Նա հրաւիրում է իր բոլոր ազգականներին ու բարեկամներին, պատմում է իրան հասցրած վիրաւորանքը, որից յետոյ էլ ապրել կարող